21.06. Արտաշես Է Անդ

2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի դաստիարակչական աշխատանքային հաշվետվություն

Դասվար՝ Կ. Պետրոսյան

2. Դաստիարակչական

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ,միջավայր, համապատասխան կահավորում:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ:Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները, նկատել իրենց և ընկերների թերությունները, ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ, ուշադրություն՝ փոքրերի նկատմամբ:
- Կարևորել եմ անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Ձևավորել եմ բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հետագա ուսումնառության և վարքի հիմքը: Ծանոթացրել եմ հայ և արտասահմանյան հանճարեղ մարդկանց կյանքին, նրանց գործունեությանը, կատարած սխրանքներին:
- Ձևավորել հայրենասեր, ազգանվեր, կրթված, ընկերասեր անհատներ՝ պատրաստ հաղթահարելու բոլոր խոչընդոտները և առաջ շարժվելու ձգտումը:
- Դասարանի աշակերտներից մասնակից են եղել 2-ական աշակերտներ <<Ասմունքի և ընթերցանության, վայելչագրության>> մրցույթներին, որտեղ աշակերտները գրավել են 1-ին և 2-րդ տեղերը:
- Աշակերտներից մի քանիսը մասնակցել են դպրոցական, մարզային <<Սպորտլանդիաներին>>:
- Ամանորյա միջոցառում և Ձմեռ պապիկի դիմավորում:

- Մուլտֆիլմերի դիտում <<Չի կարելիների աշխարհում>>:
- <<Թափոնահանություն>> տեսանյութի դիտում և քննարկում:
- Մասնակցել ենք <<Երեխաների իրավունքներն ու պարտականությունները>> խորագրով սեմինարին:
- Անց է կացվել տարրական դասարանի ավարտական <<Մանկության հեքիաթ>> միջոցառումը:
- <<Մայրաքաղաք Երևանի տեսարժան վայրերը>> խորագրով աշակերտները ուղևորվել են էքսկուրսիա: